ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	«ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ» մեդալ Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված մեդալից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է աջ և ձախ մասում կապույտ, իսկ մեջտեղում սպիտակ մետաքսյա 24 մմ լայնություն ունեցող ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները նույնն են՝ 39 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 28 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերին մասի կենտրոնից մինչև ներքին գագաթը 50 մմ է: Կախիչի հակառակ երեսում ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար: Մեդալը իրենից ներկայացնում է ճառագայթաձև ութանկյուն, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են, այն պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից և ոսկեպատված է 999 հարգի ոսկով: Մեդալին արտագծած շրջանագծի տրամագիծը 40 մմ է, դիմերեսին՝ կենտրոնական շրջանագծի մեջ պատկերված է ՀՀ դատախազության զինանշանը՝ էմալապատված եռագույն էմալով, եզրագծված դափնեպսակով: Մեդալի եզրային շրջանագծի մեջ, վերևում ուռուցիկ տառերով գրված է «ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ» բառերը: Մեդալի դարձերեսին կա գրվածք «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» և ուղղանկյուն շերտիկ՝ հերթական համարը գրելու համար: Մեդալների միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է հատուկ տեխնոլոգիայով և դրոշմման ճանապարհով: Մեդալի շերտաձողի չափերն են 24Х12մմ: Շերտաձողի ժապավենը կրում է մեդալի ժապավենի գունային նկարագիրը: Տուփի չափսերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, քաշը՝ 120գ/մ2 երեսպատված դիզայներական պլայկ թղթով:

	Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում մեդալի չափսերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ դատախազության լոգոտիպի UV տպագրություն: Տուփի գույնը և մեդալի տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	